

ՅԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՄԻՏԱ ՎՈՐԱԳԵՏԻ ՄԵՍԻՆ

Հայր Կոմիտասի անունն այնքան մոտ է մեր բոլորիս սրտին, որ ամեն մի մանրամասնություն, ամեն մի նոր լուսաբանություն մեծ երաժշտագետի կյանքի մասին, սիրով և հետաքրքրությամբ կընդունվի մեր ընթերցողների կողմից:

Հ. Կոմիտասի կենսագրությունը պետք է լիակատար ծավալով մատուցվի մեր ընթերցող հասարակությանը ճանաչելու աղբյուրների մարդուն իր բոլոր կողմերով: Եթե նրա մասին մեր ունեցած այս հիշողությունները որոշ նորություն և լուսաբանություն կմտցնեն նրա կենսագրության մեջ, ապա դրանով մեծապես վարձատրված կլինենք՝ մի կողմից նպաստած լինելով ավելի բազմակողմանիորեն ճանաչելու նրան, մյուս կողմից հրապարակով արժանի հարգանք մատուցանելու նրա անքիժ հիշատակին:

Մենք բախտ ենք ունեցել հայր Կոմիտասի հետ միասին պաշտոնավարելու Գեղորդյան Հոգևոր ճեմարանում 1901—1907 թ. թ.:

Հ. Կոմիտասն արտասահմանից վերադառնալով, շատ կարճ ժամանակում մեծ անուն հանեց թե իր կազմած քառաձայն խմբի ներդաշնակ երգեցողությամբ և թե իր հմայիչ մշակված ձայնով: Մեր ակնարկած Իսմայիլյան շրջանում նրա քառաձայն խումբը կազմված էր բացառապես ճեմարանի աշակերտներից և ուսանողներից:

Այս հանդամանքը մեծապես կաշկանդում էր նրան, հնարավորություն չունենալով դրանից օժանդակ ուժեր՝ մանավանդ կանացի ձայներ բերելու: Չնայած դրան, այնուամենայնիվ իր ձեռքի տակ եղած ուժերով էլ նա կարողանում էր իր խումբն արժանի բարձրության վրա պահել: Հ. Կոմիտասի

խումբը երգում էր Մայր Տաճարում և ճեմարանում թե հանդեսների ժամանակ, թե մեծ տոներին՝ բացօթյա, հենց ժողովրդի մեջ:

Հայր Կոմիտասի գործունեությունը մեր նշած ժամանակաշրջանում արտահայտվել է քառաձայն խմբի ղեկավարության և եկեղեցական ու առավելապես ժողովրդական երգերի մշակման մեջ:

Հայտնի է, որ եկեղեցական խորագրություն ամենաէական մասը ա. պատարագն է: Հ. Կոմիտասից առաջ պատարագի երգեցողության մշակման վրա ամենից շատ աշխատել է հանդ. երաժշտագետ Մ. Եկմայանը, որի մշակած ու ելրոպական նոտաներով հրապարակված պատարագի քառաձայն երգեցողությունը մի պատկանելի աշխատանք պետք է համարել երաժշտական արվեստի ասպարեզում:

Հ. Կոմիտասը մշակեց պատարագի իր քառաձայն երգեցողությունը, որը շատ կողմերով տարբեր էր Եկմայանի կողմածից: Մենք կոմպոսիտոր չենք երաժշտական տեսակետից մոտենալու աղբյուրների և համեմատելու միմյանց հետ, բայց միայն կասենք սոսկ իբրև ունկնդիր մեր և բազմաթիվ անձանց տողացած տպավորությունը Հ. Կոմիտասի պատարագի երգեցողությունից:

Պատարագի արարողությունը բավական երկար է տևում, երբ ատյանում քառաձայն խումբն է երգում: Մեր եկեղեցիներում թիշա ոտի վրա կանգնած են լսում ժամերգությունը, Չնայելով այդ հանդամանքներին, Հ. Կոմիտասի պատարագի երգեցողությունը շատ սիրով և անձանդ

լույթ էր լսվում և հոգեկան մեծ բազմա-
կանություն պատճառով ունեցեցինք:

Մեր ակնարկած ժամանակաշրջանի սկզբ-
ում Պրիմյան Հայրիկն արդեն բոլորել էր
իր կյանքի 80-ամյակը և մոել 81-ի մեջ,
և շնայած այդ պատկառելի տարիքին, նա
մինչև պատարագի վերջը մնում էր Մայր-
Տաճարում և լսում Հ. Կոմիտասի երգեցո-
ղությունը: Մայր-Տաճարը միշտ լիքն էր
լինում աղոթող երկսեռ խումբ բազմու-
թյամբ: Շատ մարդիկ կերակրի և տոն օրե-
րին դալիս էին Երևանից ու Կլմիածին
հատկապես Հ. Կոմիտասի քառաձայն խմբի
երգեցողությունը լսելու: Բազմության
հոգեկան դաշյուղը դազաթնակետին էր
հասնում, երբ Հ. Կոմիտասը պատարագի
վերջում «Գոհանմա՞ք»-ից հետո ինքն իր
ուսեղ ու մշակված քաղցրիկ ձայնով եր-
գում էր «գանձ»-երից մեկը, օրինակ՝ Գրե-
զոր Նարեկացու «Հալիկ»-ը: Պետք էր
տեսնել հալաքված ժողովուրդի բուռն հա-
վաքակությունը նրա երգի տապալուրության
տակ, երբ երգում էր իր սիրած «Հալիկ»-ը:
Հիմալուրց Տաճարի կամարները թնդ-
դոթ են նրա անուշիկ ձայնից, որի ելեկշ-
ները տարածվում, մարվում են հսկա տա-
ճարի բոլոր անկյուններում, իսկ աղոթող-
ների ստվար բազմությունը դամված իր
տեղում և հափշտակությունը լսում էր
նրան: Պատարագից հետո, երբ բազմու-
թյունը դուրս էր դալիս տաճարից, շատե-
րը մոտենում էին Հ. Կոմիտասին և իրենց
հիացմունքը հայտնում թե իմրի երգեցո-
ղության և թե հենց իրեն, Հ. Կոմիտասի
երգեցողության առթիվ: Հ. Կոմիտասը
հարգանք, սեր էր վայելում բոլորի կող-
մից:

Պրիմյան Հայրիկը շատ էր սիրում հան-
դիսավորությունն առլ եկեղեցական մեծ
տոներին, մանավանդ ավար չարաթի տո-
ներին, Զատիկին, Ս. Կլմիածնի և չրջակա
կույսերի վկայարանների տոներին: Նախան-
ձակնդիր լինելով գեղեցիկ երգեցողությա-
նը, Հայրիկը նախօրոք Տաճարի լուսարա-
րապետի և Հ. Կոմիտասի հետ խորհրդակ-
ցում էր նախկան այդ տոներն արժանա-

վոր վայելչությամբ կատարելու համար:
Բոլոր տոներին Հ. Կոմիտասն իր քառա-
ձայն խմբով և իր երգեցողությամբ ամե-
նակենտրոնական տեղն էր զբաղում:

Գևորգյան ճամարանում, նրա ընդարձակ
դահլիճում, եկեղեցական ու աղջային բո-
լոր տոներին միշտ գրական-երաժշտական
հանդեսներ էին կազմակերպում Վեհապետ
Հայրապետի, վանքի ամբողջ միաբանու-
թյան, ուսուցիչների ու նրանց ըն-
տանիքների և դրսից սակավաթիվ անձանց
ներկայությամբ: Եթե Մայր-Տաճարում
Հ. Կոմիտասը փայլում էր եկեղե-
ցական երգեցողությամբ, ապա այս հան-
դեսներին նա իր բնատուր շնորհքը ցուցա-
դրում էր աղջային ու ժողովրդական եր-
գերով, որոնց մշակման վրա նա օրնիբուն
աշխատում էր: Պետք է նկատի ունենալ,
որ դպրոցական աշակերտական քառաձայն
խմբերն իրենց կազմով ամեն տարի փո-
փոխվում էին. տարեկան լսվողներն
ընդմիջ հեռանում էին, նրանց փոխարի-
նում էին նոր ուս. տարիս սկզբին ընդուն-
վածները, այնպես որ Հ. Կոմիտասն ամեն
տարի նոր քառաձայն խումբ էր կազմում:

Նա իր պարապմունքներն սկսում էր
հենց ուս. տարիս սկզբին ամենայն ժա-
նանությամբ, որպեսզի առաջին մեծ տոնին՝
ճամարանի տարեդարձին, սեպտեմբերի վեր-
ջին իր խմբով հանդես գա հասարակու-
թյան առաջ: Նրան հաջողվում էր զարմա-
նալի արագությամբ աշակերտներին սովոր-
եցնել ներդաշնակ երգել: Պարապմունք-
ների ժամանակ նա շատ խոտապահանջ էր.
որքան նա բարի էր, կատակասեր ազատ
ժամերին, այնքան ավելի խիստ էր գործի
ժամանակ. պահանջլուս ու անողք: Նա
սիրում էր իր գործը հոգու ամբողջ դո-
րությունով և գործի մեջ ուղևորության
ժամին նրան տեսնողն ինքն էլ էր համակ-
վում նույն զգացմունքով, նրա ապրումնե-
րով: Հ. Կոմիտասը, ջերմորեն սիրելով իր
գործը անկեղծորեն սիրում էր նաև իր
խմբի աշակերտներին, որոնք գործնակա-
նապես տեսնում էին իրենց սիրելի ուսուց-
չի քրտնաջան աշխատանքի արդյունքը:

Թմբախան երգեցողության ժամին կամ ինչպես Հ. Կոմիտասն էր ասում, խմբերգին, խմբի բոլոր անդամներն անհապաղ զանգը տալուն պես հավաքվում էին դահլիճում: Վաղն եկել տարել էր պատահաբար ուշացողին, որովհետև Հ. Կոմիտասը լռելյայն այնպիսի զայրացկոտ հայացք էր դնում ուշացողի վրա, որ վերջինս ամոթից տեղի ու տեղը հալվում էր: Աշակերտները գիտեին նրա բնավորության այս կողմը և երբեք թույլ չէին տալիս իրենց ներացնել սիրելի ուսուցչին:

Հ. Կոմիտասը քառաձայն խմբի հետ պարապելուց բացի, առանձին պարապում էր նույն խմբի երաժշտական ընդունակությունը օժտված և լավ ձայն ունեցող ու ապագա խոստացող աշակերտների հետ: Նրանցից ոմանք հետադարձում երաժշտության դասատուները դարձան մեր դպրոցներում, իսկ ոմանք էլ քարճապղնձն երաժշտական կրթություն ստացան: Վերջիններից էր տաղանդավոր երաժշտագետ հանգ. Սպ. Մելիքյանը, որն անժամանակ դերեզման իջնելով հնարավորություն չուներ ցամաք իր ամբարած մեծ պաշարը լիակատար ծավալով հանդես բերել:

Ամբողջ սեպտեմբերի ընթացքում պարապելով իր նորակազմ քառաձայն խմբի հետ, Հ. Կոմիտասը կազմ ու պատրաստ էր իր խմբով երեվայու հասարակության առաջ և, ինչպես ասացինք, առաջին մեծ տոնը Գեփորդյան ճեմարանի տարեդարձն էր, որ տոնվում էր սեպտեմբերի վերջին՝ ս. Գեփորդի տոնին, Մոզնու ուխտին:

Այդ օրերին մեծ քանակությամբ հյուրեր էին լինում նաև հեռավոր քաղաքներից՝ Լենինականից, Կարսից, Ախալքալախից, Թիֆլիսից և այլն: Ճեմարանի տոնը կատարվում էր բացօթյա, ճեմարանի հյուսիսային լակում: Գույնգույն լապտերներով, վառ ծաղիկներով և ընկուզենու դալար տերևներով դեղեցիկ դարձրված ճեմարանի շենքի հյուսիսային դռան առաջ շարվում էին բազկաթոռներ, աթոռներ, բազմաթիվ նստարաններ Վեհափառի, միաբանության, ուսուցիչների և հեռավոր

տեղերից եկած հյուրերի համար, իսկ հազարավոր ժողովուրդը խոնավում էր շուրջը և սպասում հանդեսի բացմանը: Ահա երևում է Պրիմյան Հայրենիք, չբնականաբար միաբանության անդամներով և հյուրերով: Բաղմելով իր համար պատրաստված դարձարուն դահլի վրա, մնացածներն էլ տեղավորվելով աթոռների ու նստարանների վրա, Հայրենիք բաց է անում հանդեսը: Հնչում է Հ. Կոմիտասի քառաձայն երգը նախկին ճեմարանի հիմնադիր Գեփորդ Դ. Կաթողիկոսի հիշատակին, որից հետո ճեմարանի տեսուչը հաշվետվություն էր անում հասարակությանը անցած ուս. տարվա գործունեության մասին: Դրան հաջորդում է Հ. Կոմիտասի խմբի երկրորդ երգը, աղագային կամ ժողովրդական, ապա ամեն մի բանավորությունից կամ ամուլ պատշաճի արտասանված դեղեցիկ բանաստեղծությունից հետո երրորդը, չորրորդը և այսպես մինչև հանդեսի վերջը: Հ. Կոմիտասը մեծ օվաղյանների էր արժանացնում, նրա երգերը կրկնել էին տարիս, իսկ «Է՛ր, լո՛ւ»-ի երգելու ժամանակ հողեկան դարչունան անակարագրելի էր դառնում:

Հ. Կոմիտասի խումբն այնուհետև նույն օրվա և հաջորդ կիրակի օրվա երեկոները դարձյալ հանդես էր դալիս ժողովրդի մեջ գլխավորապես ժողովրդական երգերով, որոնք մեծ հիացմունք էին պատճառում բոլորին: Ժողովուրդն ակնհայտ իր աչքով տեսնում և լսում էր, թե ինչպես իր անձնակ երգը հմուտ վարպետի ձեռքին կերպարանափոխվել ու ավելի դուրեկան է դառել: Շատ անգամ Հ. Կոմիտասը իր խմբով մտնելով ճեմարանի բակում հավաքված ուխտավորների մեջ հորդորում էր փոխելով երգել: Առաջին օրինակն ինքն էր տալիս, հետո երիտասարդներից կազմված խումբն էր պար բռնում ու երգում, ապա դարձյալ ճեմարանի խումբը, և այսպես մինչև ուշ գիշեր:

Այս և հետագա մյուս տոներին լապտերի խոսակցության նյութը Հ. Կոմիտասն էր և իր խումբը: Այսպիսի տոներին ժողո-

վերադր ստեղծում էր, անգիր անում քառասուն խմբի երգերը, որոնք այնուհետև բերններաբան անցնելով, տարածվում էին մեր երկրի բոլոր անկյունները: Միևնույն ժամանակ Հ. Կոմիտասը օգտվելով ժողովրդի խառն բազմության ներկայությունից, միշտ հետամուտ էր լինում, թե ինչ են երգում, և երբ մի նոր երգ էր լսում, իսկույն մոտենում էր և անմիջապես ձայնագրում: Այնուհետև ժողովրդից վերցրածը հղիելով, նույն ժողովրդին էր մատուցում գեղեցիկ մշակված ձևով: Այսպեսով նա իր խմբով ժողովրդի երաժշտական ճաշակը զարգացնում ու բարձրացնում էր:

Հ. Կոմիտասի խմբի անունն ավելի ու ավելի էր հռչակվում: 1905 թվի մարտին նա հրավեր է ստանում իր խմբով գնալ Թիֆլիս և համերգ տալ: Վեհապառից թույլտվություն ստանալով Հ. Կոմիտասը իր քառասուն խմբով ուղևորվում է Թիֆլիս և այնտեղ արտիստական ընկերության դահլիճում մի համերգ է տալիս, բաղկացած երկու մասից՝ հողևոր և աղջայկն-ժողովրդական երգերից: Համերգը բացվում է «Էջմիածինն ի հօրէ» շարականով, որ ցնծալին աղաղակներով է ընդունվում: Ամբողջ համերգը չտեսնված հաջողություն է ունենում: Համերգը կրկնվում է: Այն ժամանակվա Թիֆլիսի մամուլը մեծ դուրսանքով է խոսում այս համերգի մասին:

Ամառվա ամիսներին, երբ ուսումնական պարապմունքներից ազատ էր, Հ. Կոմիտասը շրջում էր մեր դալանները և ժողովրդական երգեր հավաքում: այսպես, նա շրջում էր Մուրմարու, հատկապես Կողբը, ամբողջ Երևակը, ժողովրդական երգերով հարուստ այդ շրջանը, Արագածի հարավային փեղերին փոխած գյուղերը, Ալաբանը և այլն, և հարապառնջությամբ ամբարշտ, աչնա, սկզբին վերադառնում ու էջմիածին ու հախաբաժը մշակում, հրատարակում:

Այսպես էր նույնիսկ ամառվա արձակուրդի ամիսներին, այս հրաշալի մարդը միշտ դալաված, միշտ տարված, միշտ

դործով ուղևորված: Բայց նա ունենում էր նաև անկախվածի ազատ ժամեր, որ ամենայն սիրով անց էր կացնում ճեմարանի ուսուցչական խմբի հավաքույթներում: Մեր աննարկած ժամանակաշրջանում Վաղարշապատում չկար մի կուլտուրական ժամանցի վայր, ուր ուսուցիչները կարողանային գնալ և հանգստանալ, ուստի սովորություն էր դառել, որ հերթով ամեն շաբաթ երեկո ուսուցիչներն իրենց ընտանիքներով հավաքվում էին միմյանց մոտ:

Այդ ժամանակաշրջանի ճեմարանի ուսուցիչներից ներկայումս ողջ են անկաղեկիտ, Հակ. Մանանդյանը, Պրոֆ. Ալ. Տ. Պողոսյանը, արվեստի վաստգործիչ Գ. Լեոնյանը, Ֆիլ. գիտ-գրկաոր Եր. Տ. Մինասյանը, վաստ. ուսուցիչ Հ. Արխաուկեսյանը, Ս. Ավետյանը, Ա. Շահնազարյանը և ուրիշները:

Այս հավաքույթներում սեղանի զարդը Հ. Կոմիտասն էր, և երբ նա հայտնվում էր, ամենքը հրճվանքով էին դիմավորում նրան, մանավանդ երեխաները: Վերջիններն իսկույն շրջապատում էին նրան, նա էլ զբաղեցնում էր նրանց դանազան մանկական խաղերով, երգերով:

Այնուհետև Հ. Կոմիտասը, նստելով բաց լած սեղանի շուրջը, կատակներով, զվարհացնում էր բոլորին, բայց երբ դալիս էր Երգի ժամանակը, նա լրջանում էր և սելանակիցների թախանձանքով երգում զանազան երգեր, նրա երգերը ուղղակի կախարդում էին ամենքին: ամեն բան մոռացվում էր, միայն ուղում էին շարունակ լսել նրա դյուլթիչ ձայնը: Հ. Կոմիտասը վերին աստիճանի պարզ և համեստ մարդ էր. երբեք չէր պատահում, որ նա հրաժարվեր երգելուց, նազ աներ: Հարգելով սեղանակիցների ցանկությունը, նա միշտ պատրաստակամ էր երգելու: Մտերմական այս շրջանում նա հանդես էր գալիս մարդկային բոլոր արժանախորություներով, որով և սիրելի էր դառել ամենքի համար: Տեղի ունեցած հավաքույթից հետո պատարովի ապաստում էինք հաջորդ շաբաթ օրվա երեկոյին, երբ բախտ կուեննայինք նորից

տեսներու Հ. Կոմիտասին մեր միջև և նրա
հրգով զմայլվելու:

Կարճատև եղավ Հ. Կոմիտասի գործու-
նեութիւնը մեր Հայրենիքում, բայց ինչ
որ նա տվեց, համիտենական անմոռաց կո-
թող կմնա նրա մաքուր և վեհ հիշատակին:
Մեծ երաժշտագետի անշունչ հանդիման է

մեզ մոտ, Երեվանում՝ գեղածիծաղ Հրադ-
դանի բարձր աթին, որտեղից Հրաչապի տե-
րարան է բացվում դեպի Մասիսն ու Արա-
ղածը, դեպի իր սիրած լեռները, որտեղ
նա շատ է ման եկել և որոնց անուններն
անմահացրել է իր երգերում:

ՀՈՎՍԵՓ ԳՐԻԳՈՐՅԱՆ

